Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-740-19.10.2009,11.02.2011-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. նոյեմբերի 20-ի ՀՕ-465-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ) կետով.

«5) Մշակութային ոչ առեւտրային առանձին կազմակերպությունների շնորհում է կարգավիճակ, սահմանում է կարգավիճակ շնորհելու կարգն ու պայմանները»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ) կետով

«11) ներկայացնում է մշակութային ոչ առեւտրային առանձին կազմակերպություններին՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, թանգարանային, գրադարանային եւ արխիվային կազմակերպություններ, «Ազգային» կարգավիճակ շնորհելու վերաբերյալ միջնորդություն»

Հոդված 3. Օրենքի 7-րդ Գլխի վերնագրում «ՏԵՍԱԿՆԵՐԸ» բառից հետո լրացնել «ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ» բառերով:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետեւալ բովանդակությամբ նոր՝ 26.1 հոդվածով. «Հոդված 26.1. Մշակութային ոչ առեւտրային կազմակերպության կարգավիճակը»

1.Մշակութային առանձին կազմակերպությունների՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, Ֆիլմարվեստի, թանգարանային, գրադարանային եւ արխիվային կազմակերպություններ, որոնք համապետական եւ համազգային նշանակության բացառիկ գործունեություն են իրականացնում, կարող է շնորհվել «Ազգային» կարգավիճակ:

2. Գործող և նոր ստեղծվող կազմակերպություններին սահմանած կարգով «Ազգային» կարգավիճակ շնորհում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

«Ազգային» կարգավիճակ ունեցող կազմակերպությունները պետք է.

1) առանձնանան ինքնատիպությամբ, կատարողական բարձր վարպետությամբ, անժամանցելի ձեռքբերումներով հարստացնեն և զարգացնեն հայկական մշակութային ժառանգությունը, նպաստեն նրա

պահմանմանն ու հանրահռչակմանը, խթանեն ազգային և համամարդկային արժեքների տարածմանը, նպաստեն հասարակության բարոյական և գեղագիտական դաստիարակությանը.

2) նորաստեղծ պետական կազմակերպությունները, որոնք մշակութային գործունեության տվյալ ոլորտում առանձնանում են իրենց բացառիկ բնույթով և իրենց կանոնադրական գործառույթներում նախատեսված են սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները, կարող են հավակնել «Ազգային» կարգավիճակի:

3. «Ազգային» կարգավիճակ կարող է շնորհվել մշակույթային գործունեության տվյալ ոլորտը եւ տեսակը ներկայացնող միայն մեկ կազմակերպության:

4. «Ազգային» կարգավիճակ ունեցող մշակութային կազմակերպությունների ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեում արտահայտվում է առանձին տողով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Լիլիթ Գալստյանի, Արա Նռանյանի, Վահան Հովհաննիսյանի, Անահիտ Բախշյանի, Արմեն Ռուստամյանի, Արծվիկ Մինասյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մարտի 3-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Առաջարկության հեղինակ	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	1. Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Ազգային կարգավիճակ շնորհվում է՝ 1) այն կազմակերպություններին, որոնք առանձնանում են ինքնատիպությամբ, կատարողական բարձր վարպետությամբ, անժամանցելի ծեռքբերումներով հարստացնում և զարգացնում են հայկական մշակութային ժառանգությունը, նպաստում են նրա պահմանման ու հանրահռչակմանը, խթանում են ազգային և համամարդկային արժեքների տարածմանը, նպաստում են հասարակության բարոյական և գեղագիտական դաստիարակությանը. 2) նոր ստեղծվող այն պետական կազմակերպություններին, որոնք մշակութային գործունեության տվյալ ոլորտում առանձնանում են իրենց բացառիկ բնույթով և այդ կազմակերպությունների կանոնադրական գործառույթներում նախատեսված կլինեն սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	2) Օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «կետերով» բառը փոխարինել «կետով» բառով:	Ընդունվել է: